ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

## Ուսուցչի սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման քննության թեստի ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ........................................................................................................ 3
ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ........................................................................................................ 4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ.................. 4
ԿԱՐԳԸ ........................................................................................................ 4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ........................................................................................................ 6
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ........................................................................................................ 7
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ ........................................................................................................ 8

## ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2023թ. «Ինֆորմատիկա» առարկան դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման թեստերի կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների նմուշ օրինակներ, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Ինֆորմատիկա» առարկայի հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերը:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Ինֆորմատիկա» առարկայի ուսուցիչների ատեստավորման թեստը գնահատվում է 70 միավոր, որից 40 միավորն ընտրովի պատասխանով առաջադրանքներին է բաժին ընկնում, իսկ 30 միավորը՝ կարճ պատասխանով առաջադրանքներին:

Թեստում 1-40-րդ առաջադրանքներն ընտրովի պատասխանով են, 41-70-րդը՝ կարճ պատասխանով և ընդգրկում են ինֆորմատիկայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները:

Ուսուցիչների ատեստավորման թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

I. **Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**:

Նմուշ: HTML-փաստաթուղթը ներառում է երկու հիմնական բաժին՝

1. վերնագրերի բաժինն ու փաստաթղթի մարմինը
2. գլխագիրը և նկարների բաժինը
3. վերնագրի բաժինն ու պարագրաֆի բաժինը
4. տեքստի գույնն ու վերնագրի բաժինը

Գնահատման չափանիշը: 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

Ձևաթղթի լրացման կարգը:

Պատասխանների ձևաթղթում 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ ենթադրենք, 4-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-ն է (տե՛ս նկար 1):




Նկ.1

**II. Կարճ պատասխանով առաջադրանքներ:**

Ա. Կարճ պատասխանով առաջադրանքների պատասխանները ոչ բացասական ամբողջ թվեր են:

**Նմուշ 1: Ինչի՞ է հավասար Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակում MIN(82, 2, 16) ֆունկցիայի արժեքը:**

Այս առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական հինգ վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան (չափման միավորը չի նշվում): Թվանշանների քանակը պարտադիր չէ, որ լինեն հինգը:

**Բ. Բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ:**

Տրված են առաջադրանքի վերաբերյալ պնդումներ, որոնցից անհրաժեշտ է ընտրել բոլոր ճիշտ պատասխանները կամ բոլոր սխալ պատասխանները:

**Նմուշ 2 : 42. Ո՞ր պնդումներն են ճիշտ.**

1. RoundUp(4.5698)=158
2. Average(2,8,10)=22
3. Max(2,3,5)=5
4. Sum(5,8,9) = 56
5. Min(12,30,55)=12

Այս առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է գրել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ պատասխանների համարները, նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:




Նկ. 2

Գնահատման չափանիշը:

Թեստի 41-70-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

Ձևաթղթի լրացման կարգը:

41-70-րդ առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական հինգ վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան:

Ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի հորիզոնական վանդակում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակներից մեկում դնել «X» նշանը (տե՛ս նկար. 3):




Նկ. 3

Կարճ պատասխանով առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո վանդակներում լրացվում է պատասխանը: Նկար 4-ում պատկերված է կարճ պատասխանով առաջադրանքի ուղղված պատասխանը:




Նկ.4

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Ինֆորմատիկա» առարկայի ուսուցչի ատեստավորման թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Ինֆորմատիկա» առարկայի ուսումնական ծրագրերի:

Թեստում ընդգրկված են դպրոցական ծրագրի բոլոր թեմաները՝

Ինֆորմացիա

Ինֆորմացիայի քանակի չափումը

Անհատական համակարգիչ

Գրաֆիկական խմբագրիչներ

Տեքստային խմբագրիչներ

Էլեկտրոնային աղյուսակներ

Համակարգչային հեռահաղորդակցուղիներ

Հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ

Ալգորիթմներ

Ինֆորմացիայի համակարգչային ցուցադրում

Ծրագրավորման C++ լեզվի հիմունքները

Ծրագրավորման Պասկալ լեզվի հիմունքները

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ`

- պարզագույն հաշվիչ

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ

2023թ. ***Ուսուցչի ատեստավորման քննություն***
*Պատասխանի ձևաթուղթ*
***Ինֆորմատիկա***

ազգանուն

անուն հայրանուն

